ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

10.06.2024թ. հարցման կարգով նիստի N 12 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ

Արտասահմանյան գրականության ամբիոնի 2024 թ. առկա ուսուցմամբ ասպիրանտ **Նաթելլա Լենժետի Հովակիմյանի** ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը։

Լսեցին՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի 2024 թ. առկա ուսուցմամբ ասպիրանտ **Նաթելլա Լենժետի Հովակիմյանի** ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը։

Արտահայտվեցին՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Անուշ Սեդրակյանը, ներկայացնելով **Նաթելլա Հովակիմյանի** թեկնածուական ատենախոսության թեման՝ **«Նոր միֆամտածողությունը Ջոն Ափդայքի արձակում»**, նշեց, որ Նաթելլա Հովակիմյանն ավարտել է եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի բակալավրի «Անգլերեն լեզու և գրականություն» և մագիստրոսի «Արտասահմանյան գրականություն» կրթական ծրագրերը, տիրապետում է անգլերենին և գերմաներենին, ուսումնասիրում է անգլո-ամերիկյան գրականություն։ Ն. Հովակիմյանն ունի 2 տպագրված հոդված «Գրականագիտական հանդես» գիտական ամսագրում։

Թեմայի ընտրությունը 20-րդ դարի ամերիկյան գրականության համատեքստում լիովին *արդիական* է։ 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին արևմտյան գրական աշխարհում սկիզբ առած գրական նոր ուղղությունը՝ մոդեռնիզմը, բնորոշվում է ավանդույթից միտումնավոր, մինչև իսկ արմատական հեռացումով։ Ուղղությունը սկիզբ է առնում սոցիալ-հասարակական արագ փոփոխությունների ու գիտական նշանակալից զարգացումների շրջանում, և դրանք իրենց արձագանքն են գտել 20-րդ դարի շատ հեղինակների ստեղծագործություններում։ Թեմայի ձևակերպման մեջ նկատի է առնված այն, որ ուսումնասիրվելու են հեղինակի հնարավորինս մեծ թվով

արձակ ստեղծագործություններ, այդ թվում՝ մինչ այժմ հայ և համաշխարհային գրականագիտության մեջ մեծ ուշադրության չարժանացած ստեղծագործությունները:

Որոշեցին՝ Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Նաթելլա Լենժետի Հովակիմյանի** թեկնածուական ատենա-նախոսության թեման՝ **«Նոր միֆամտածողությունը Ջոն Ափդայքի արձակում»** (Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտություն): Գիտական ղեկավար հաստատել **բ. գ. դ, պրոֆեսոր Արա Հրաչիկի Առաքելյանին:** Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի
դեկան և գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

10.07.2024թ.